S9BY8832-12 (HY)
Օգոստոս 2017թ.

Շահագործման ու սպասարկման ձեռնարկ

Product Link™ PLE601, PL641, PL631, PL542, PL240, PL241, PL141, PL131, PL161 և G0100 համակարգեր

PL6 1-UP (Մեքենայի կառավարման և ուղեցույց արտադրանքներ)
PL2 1-UP (Մեքենայի կառավարման և ուղեցույց արտադրանքներ)
PL1 1-UP (Մեքենայի կառավարման և ուղեցույց արտադրանքներ)
PL5 1-UP (Մեքենայի կառավարման և ուղեցույց արտադանքներ)

Անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ

Արտադրանքի շահագործման, սպասարկման ու վերանորոգման ժամանակ տեղի ունեցող պատահարների մեծ մասի պատճառն անվտանգության տարրական կանոնների կամ նախազգուշական միջոցների անտեսումն է: Հաճախ պատահարներից կարելի է խուսափել՝ վաղօրոք ճանաչելով հավանական վտանգ պարունակող իրավիճակները: Անհրաժեշտ է զգոն լինել հավանական վտանգների նկատմամբ՝ հաշվի առնելով նաև անվտանգության վրա ազդող մարդկային գործոնները: Այդ գործառույթները պատշաճ իրականացնելու համար տվյալ անձը պետք է ունենա նաև անհրաժեշտ պատրաստվածություն, հմտություններ ու գործիքներ:

Այս արտադրանքի սխալ շահագործումը, յուղումը, սպասարկումը կամ վերանորոգումը վտանգավոր է և կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան:

Չեռնպահ մնացեք մեքենայի գործարկումից և ցանկացած յուղման, սպասարկման կամ վերանորոգման աշխատանքներից, քանի դեռ չեք հավաստիացել, որ իրավասու եք այդ անելու, և որ ընթերցել ու յուրացրել եք շահագործման, յուղման, սպասարկման ու վերանորոգման մասին տեղեկությունները:

Այս ձեռնարկում և արտադրանքի վրա առկա են անվտանգության ցուցումներ ու նախազգուշացումներ: Վտանգի մասին նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել Ձեզ կամ այլ անձանց մարմնական վնասվածքի հասցման կամ մահվան:

Վտանգները նշված են «Վտանգի մասին զգուշացման խորհրդանիշով», որին հետևում է «Նշանաբառը», օրինակ՝ «DANGER» («ՎՏԱՆԳ»), «WARNING» («ԶԳՈՒՇԱՑՈՒՄ») կամ «CAUTION («ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ»): Զգուշացնող «WARNING» («ԶԳՈՒՇԱՑՈՒՄ») պիտակը ցուցադրված է ստորև:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս զգուշացնող նշանի իմաստը հետևյալն է.

Ուշադրությո՛ւն: Զգուշացե՛ք: Խնդիրը Ձեր անվտանգությունն է:

Զգուշացման տակ առկա է լինում վտանգը պարզաբանող ուղերձ, որը կարող է լինել գրավոր կամ պատկերային:

Արտադրանքի վնասման հավանական պատճառ հանդիսացող գործողությունների սահմանափակ ցանկը արտադրանքի վրա և այս հրապարակման մեջ նույնականացված է «NOTICE» («ԾԱՆՈՒՑՈՒՄ») պիտակով:

Caterpillar-ն անկարող է կանխազգուշակել հավանական վտանգ պարունակող բոլոր հնարավոր հանգամանքները: Հետևաբար, բոլոր նախազգուշացումները չեն, որ ընդգրկված են այս հրապարակման մեջ և արտադրանքի վրա: Այս արտադրանքը չի կարելի օգտագործել այս ձեռնարկում նկարագրվածից բացի որևէ այլ եղանակով, եթե վստահ չեք, որ հաշվի եք առել անվտանգության այն բոլոր կանոնները և նախազգուշական միջոցները, որոնք վերաբերում են համապատասխան վայրում արտադրանքի շահագործմանը, այդ թվում տվյալ տեղանքին առնչվող կանոններն ու նախազգուշական միջոցները: Caterpillar-ի կողմից հատուկ չնախատեսված գործիք, ընթացակարգ կամ շահագործման եղանակ կիրառելու դեպքում նախ հավաստիացեք, որ դա անվտանգ կլինի Ձեզ և այլոց համար: Անհրաժեշտ է հավաստիանալ, որ Դուք իրավասու եք կատարելու տվյալ աշխատանքը, և որ արտադրանքը չի վնասվի կամ դրա շահագործումը վտանգավոր չի դառնա Ձեր նախատեսած շահագործման, յուղման, սպասարկման կամ վերանորոգման ընթացակարգի արդյունքում:

Այս հրապարակման մեջ առկա տեղեկությունները, բնութագրերն ու պատկերները հիմնված են այն տեղեկությունների վրա, որոնք մատչելի են եղել դրա ստեղծման պահին: Բնութագրերը, պտտող մոմենտները, ճնշումները, չափերը, կարգաբերումները, պատկերները և այլ տվյալներ կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ: Այդ փոփոխությունները կարող են ազդել արտադրանքի սպասարկման վրա: Նախքան ցանկացած աշխատանք սկսելը ստացեք ամբողջական ու առավել արդիական տեղեկություններ: Cat-ի ներկայացուցիչները տիրապետում են հնարավոր ամենաարդիական տեղեկություններին:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս արտադրանքի համար պահեստամասերի կարիք առաջանալու դեպքում Caterpillar-ը խորհուրդ է տալիս օգտագործել Cat-ի պահեստամասեր:

Այս նախազգուշացումն անտեսելը կարող է հանգեցնել վաղաժամ խափանումների, արտադրանքի վնասման, ինչպես նաև մարմնական վնասվածքի կամ մահվան:

Միացյալ Նահանգներում արտանետումների վերահսկման սարքավորումների ու համակարգերի սպասարկումը, փոխարինումը կամ վերանորոգումը կարող է իրականացվել ցանկացած վերանորոգման կետի կամ անհատի կողմից՝ սեփականատիրոջ հայեցողությամբ:

Բովանդակություն

Նախաբան 4

Անվտանգության բաժին

Անվտանգության նշաններ և պիտակներ 5

Ընդհանուր տեղեկություններ վտանգների մասին 6

Արտադրանքի մասին տեղեկությունների բաժին

Նույնականացման տվյալներ 7

Շահագործման բաժին

Շահագործում 24

Այբբենական ցանկի բաժին

Այբբենական ցանկ 27

Նախաբան

Տեղեկատու գրականություն

Սույն ձեռնարկը պետք է պահպանվի կառավարի խցիկում՝ գրապանակում կամ նստոցի հետնամասում գտնվող գրապահոցում:

Այս ձեռնարկը պարունակում է անվտանգության վերաբերյալ տեղեկություններ, շահագործման վերաբերյալ ցուցումներ և սպասարկման վերաբերյալ խորհուրդներ:

Այս հրատարակության առկա որոշ լուսանկարներում կամ պատկերներում ցուցադրված մասերը կամ կցորդները կարող են տարբերվել Ձեր մեքենայի ունեցածից:

Արտադրանքի դիզայնի շարունակական բարելավման ու արդիականացման պատճառով Ձեր մեքենան կարող է ենթարկված լինել սույն հրատարակությունում չներառված փոփոխությունների: Ընթերցեք, ուսումնասիրեք և պահպանեք այս ձեռնարկը մեքենայում:

Ձեր մեքենայի կամ այս հրապարակման վերաբերյալ հարցեր ծագելու դեպքում խնդրում ենք կապվել Cat-ի տեղական ներկայացուցչի հետ՝ առկա ամենավերջին տեղեկությունների համար:

Անվտանգություն

Անվտանգության բաժնում ներառված են հիմնական նախազգուշական միջոցները: Բացի այդ, այս բաժնում բերված են մեքենայում օգտագործված նախազգուշացնող նշանների ու պիտակների տեքստն ու տեղադրությունը:

Շահագործում

Շահագործման բաժինը նախատեսված է նոր կառավարին իրազեկելու և փորձված կառավարի հմտությունները թարմացնելու համար: Այս բաժինը ներառում է չափիչների, անջատիչների, մեքենայի ու կցորդների կառավարման տարրերի, տեղափոխման ու քարշակման առանձնահատկությունների նկարագրություն:

Լուսանկարներն ու պատկերները կառավարի համար կծառայեն որպես ուղեցույց՝ մեքենայի ստուգման, գործարկման, շահագործման ու անջատման համար:

Այս հրապարակումը նկարագրում է միայն հիմնական աշխատաեղանակները: Հմտություններն ու վարպետությունը զարգանում են մեքենայի և նրա կարողությունների մասին կառավարի գիտելիքների ավելացմանը զուգընթաց:

Սպասարկում

Սպասարկման բաժինը սարքավորումների խնամքի ուղեցույց է հանդիսանում:

Անվտանգության բաժին

i07048748

Անվտանգության նշաններ և պիտակներ

SMCS ծածկագիր՝ 7606

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մի շահագործեք կամ սպասարկեք այս սարքը, քանի դեռ չեք ընթերցել ու յուրացրել այն հրահանգներն ու նախազգուշացումները, որոնք շարադրված են Շահագործման և սպասարկման ձեռնարկում: Հրահանգներին չհետևելն ու նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան: Նոր ձեռնարկների համար դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին: Պատշաճ խնամքի ապահովումը Ձեր պարտականությունն է:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Սպասարկման հարթակի սխալ օգտագործումը կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան: Կառավարները պետք է պատշաճ կատարեն իրենց պարտականությունները և հետևեն մեքենային ու սպասարկման հարթակին վերաբերող բոլոր հրահանգներին ու ցուցումներին:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Շարժիչի անսպասելի գործարկման հետևանքով մեքենայի վրա աշխատող անձիք կարող են մարմնական վնասվածքներ ստանալ կամ զոհվել:


Շարժիչի անսպասելի գործարկումը կանխելու համար մարտկոցի մալուխն անջատեք մարտկոցի բացասական (-) ելքից: Մարտկոցի անջատված մալուխի ծայրի բոլոր մետաղե մակերևույթներն ամբողջովին մեկուսացրեք ժապավենի օգնությամբ՝ մետաղե այլ մակերևույթների հետ շփման հետևանքով շարժիչի էլեկտրահամակարգի հնարավոր գործարկումը կանխելու նպատակով:

Մարտկոցի անջատիչը շրջեք ԱՆՋԱՏՎԱԾ դիրք և արգելափակեք անվտանգության կողպեքով:

Գործարկման փոխանջատիչի և մարտկոցի անջատիչի մոտ տեղադրեք Հատուկ հրահանգ SEHS7332, «Չգործարկել» գրությամբ պիտակ՝ անձնակազմին մեքենայի վրա ընթացող աշխատանքների մասին իրազեկելու նպատակով:

Անվտանգության ուղերձներ

Պատկեր 1-ում ցույց տրված զգուշացնող թաղանթը գտնվում է սարքավահանակի կամ կառավարման վահանակի վրա: Սարքի բնականոն աշխատանքի ընթացքում զգուշացնող թաղանթը պարզ տեսանելի է կառավարի համար:



Պատկեր 1 g03356592

Թաղանթ

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս սարքում տեղադրված է Cat® Product Link հաղորդասարք: Պայթեցման աշխատանքներում էլեկտրական պայթուցիչների կիրառման դեպքում ռադիոհաճախականություններով աշխատող սարքերը կարող են խանգարել նման պայթուցիչների աշխատանքը, ինչը կարող է հանգեցնել ծանր մարմնական վնասվածքի կամ մահվան: Product Link հաղորդիչ սարքն անհրաժեշտ է ապագործարկել պետական կամ տեղական կիրառելի բոլոր կանոնակարգային պահանջներով սահմանված հեռավորության վրա: Կանոնակարգային պահանջների բացակայության դեպքում Caterpillar-ը շահագործողին խորհուրդ է տալիս ինքնուրույն գնահատել ռիսկը և որոշել շահագործման համար անվտանգ հեռավորությունը:

Պայթեցման աշխատանքների իրականացման վայր է համարվում բեռնման ժամանակ պայթուցիկ նյութերի կիրառման տարածքը: Այն ներառում է պայթանցքերով ձևավորված պարագիծը:

Անհրաժեշտության դեպքում Caterpillar Product Link հաղորդիչ սարքն անջատելու համար խորհուրդ են տրվում հետևյալ եղանակները.

- Product Link ռադիոհաղորդիչի ապագործարկման անջատիչը շրջեք դեպի ԱՆՋԱՏՎԱԾ դիրքը:
- Caterpillar Product Link հաղորդիչ սարքն անջատեք սնուցման հիմնական աղբյուրից: Այս գործողությունը կատարվում է հաղորդալարերի կեմը Product Link ռադիոհաղորդիչից անջատելու եղանակով:
- PL141 կամ PL131 մոդելի դեպքում անջատեք Product Link սարքը կամ հանեք նրա ներքին մարտկոցը:
- PL161 մոդելի դեպքում մեքենայից անջատեք PL161-ը:

Ծանոթություն. Ռադիոկապի ապագործարկման անջատիչով չսարքավորված մեքենան պայթեցման աշխատանքների վայրի մերձակայքում շահագործելու անհրաժեշտության դեպքում ռադիոկապի ապագործարկման անջատիչի տեղադրումը թույլատրելի է: Անջատիչը կառավարին Caterpillar Product Link հաղորդիչ սարքը մեքենայի կառավարման վահանակի միջոցով անջատելու հնարավորություն է ընձեռում: Լրացուցիչ մանրամասների և տեղադրման հրահանգների համար տես Հատուկ հրահանգ REHS7339, Հատուկ հրահանգ REHS8850, Հատուկ հրահանգ REHS9111, Հատուկ հրահանգ SEHS0377 և Հատուկ հրահանգ REHS9757:

Այլ թաղանթներ

Պատկեր 2-ում ցույց տրված զգուշացնող թաղանթը գտնվում է սարքավահանակի կամ կառավարման վահանակի վրա: Սարքի բնականոն աշխատանքի ընթացքում զգուշացնող թաղանթը պարզ տեսանելի է կառավարի համար:



Պատկեր 2 g03356733

Պատկեր 2-ում ցույց տրված զգուշացնող թաղանթը նախատեսված է սարքում անլար հաղորդիչի առկայության մասին տեղեկացնելու համար: Համապատասխանաբար՝ տվյալ մեքենայի, նրա վիճակի ու շահագործման մասին տվյալները Caterpillar Product Link հաղորդիչ սարքի միջոցով հեռարձակվում են Caterpillar-ին և օգտատիրոջ միջերեսով փոխանցվում հաճախորդներին ու Caterpillar-ի ներկայացուցիչներին: Տվյալներն օգտագործվում են հաճախորդների սպասարկումը բարելավելու և Caterpillar-ի արտադրանքներն ու ծառայությունները կատարելագործելու նպատակով: Caterpillar Product Link հաղորդիչ սարքի օգնությամբ տեղեկությունների հաղորդումը ենթակա է տվյալ տարածաշրջանում գործող օրենսդրական պահանջներին:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես Շահագործման ու սպասարկման ձեռնարկ S9BY8832, «Շահագործում» և Շահագործման ու սպասարկման ձեռնարկ S9BY8832, «Կանոնակարգային համապատասխանություն» բաժինները:

i05951990

Ընդհանուր տեղեկություններ վտանգների մասին

SMCS ծածկագիր՝ 7606

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մի շահագործեք կամ սպասարկեք այս սարքը, քանի դեռ չեք ընթերցել ու յուրացրել այն հրահանգներն ու նախազգուշացումները, որոնք շարադրված են Շահագործման և սպասարկման ձեռնարկում: Հրահանգներին չհետևելն ու նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան: Նոր ձեռնարկների համար դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին: Պատշաճ խնամքի ապահովումը Ձեր պարտականությունն է:

Նախաբան

Այս փաստաթուղթը Շահագործման ու սպասարկման ձեռնարկի հավելված է, որը վերաբերում է սարքին: Այս փաստաթուղթը մշտապես պահպանեք Շահագործման ու սպասարկման ձեռնարկին կից:

Ներածություն

Այս փաստաթուղթը տեղեկություններ է տալիս Caterpillar Product Link հաղորդիչ սարքի մասին:

Սարքի շահագործումն ու սպասարկումն անհրաժեշտ է իրականացնել միայն սարքի Շահագործման ու սպասարկման ձեռնարկում առկա ցուցումներն ու նախազգուշացումներն ընթերցելուց և յուրացնելուց հետո: Այս փաստաթղթի բովանդակությունն անհրաժեշտ է յուրացնել նախքան Caterpillar Product Link հաղորդիչ սարքով օժտված մեքենայի շահագործումը:

Արտադրանքի մասին տեղեկությունների բաժին

Նույնականացման տվյալներ

i06753185

Տեղեկություններ արտադրության մասին

SMCS ծածկագիր՝ 7606

Արևելաասիական Համայնքի ներմուծողի անվանումը և արտադրողը

Մատակարար՝ “Caterpillar Eurasia” Ltd.

Russia, Moscow, 115035 Sadovnicheskaya Nab 75

Հեռախոս՝ +7 (495) 2133340, ֆաքս՝ +7 (495) 2133372, էլ. փոստ՝ cat_moscow@cat.com

Արտադրող՝ Caterpillar Inc.

100 NE Adams Street Peoria, Illinois 61629 United States of America

Արտադրության երկիրը՝ ԱՄՆ

Արտադրության տարեթիվը

Սարքի և/կամ փաթեթավորման նշագրերը պարունակում են արտադրության տարեթվի մասին տեղեկություններ կամ այդ տեղեկությունների աղբյուրին հղում: Արտադրության տարեթիվն անհրաժեշտության դեպքում կարելի է պարզել արտադրանքի սերիական համարի օգնությամբ՝ դիմելով լիազորված տեղական ներկայացուցչին:

Պահեստավորման և տեղափոխման ժամկետն ու պայմանները

Արտադրանքը փաթեթավորված է արտադրողի կողմից՝ սպառողական փաթեթավորմամբ: Արտադրանքն անհրաժեշտ է պահեստավորել գործարանային փաթեթավորմամբ և 4-րդ խմբի կլիմայական գործոնների համար նախատեսված պահեստավորման պայմաններում՝ ըստ ԳՕՍՏ 15150-69-ի: Տուփերի նախազգուշացնող պիտակների՝ բեռնման և տեղափոխման վերաբերյալ պահանջներին հետևելու անհրաժեշտության դեպքում հարկավոր է բացառել սարքի տեսքի և աշխատունակության վրա ազդելու ունակ ցնցումներն ու հարվածները:

Տեղափոխումը կարելի է իրականացնել ծածկավոր փոխադրամիջոցների բոլոր տեսակներով: Օդային ճանապարհով փոխադրման դեպքում հավաստիացեք, որ Product Link սարքը գտնվում է փակ, ջեռուցվող բաժանմունքում:

Գործողությունները տեխնիկական բնույթի խափանումների դեպքում

Նախքան վերանորոգման համար ներկայացուցչին դիմելը ստուգեք էլեկտրալարերի վիճակը և անջատեք ու միացրեք սարքը սնուցող մարտկոցի հոսանքը: Մարտկոցի հոսանքը կարելի է անջատել ու միացնել հետևյալ եղանակներով.

- Անջատեք և կրկին միացրեք մեքենայի գլխավոր անջատիչը:
- Product Link-ի կեմն անջատեք մեքենայի հարակցիչից և կրկին միակցեք:
- Բացասական բևեռի մալուխն անջատեք մարտկոցի բացասական ելքից և կրկին միակցեք:

Եթե այս միջոցառումներն ապարդյուն են, դիմեք սպասարկման ծառայությանը:

i07161618

Կանոնակարգային համապատասխանություն

SMCS ծածկագիր՝ 7606

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Caterpillar Product Link հաղորդիչ սարքի օգնությամբ տեղեկությունների հաղորդումը ենթակա է օրենսդրական պահանջների: Օրենսդրական պահանջները կարող են տարբեր լինել ըստ տարածաշրջանների՝ ի թիվս այլոց ներառելով ռադիոհաղորդման հաճախականությունների օգտագործման թույլտվությունը: Caterpillar Product Link հաղորդիչ սարքի կիրառումը պետք է սահմանափակվի այն տարածաշրջաններով, որտեղ այն բավարարում է Caterpillar Product Link հաղորդիչ սարքի և հեռահաղորդակցության ցանցի օգտագործմանն առնչվող բոլոր օրենսդրական պահանջները:

Եթե Caterpillar Product Link հաղորդիչ սարքով օժտված մեքենան գտնվում է այնպիսի տարածքում կամ տեղափոխվում այնպիսի տարածք, որտեղ (i) այն չի բավարարում օրենսդրական պահանջները կամ (ii) որտեղ նման տեղեկությունների հեռարձակումը կամ մշակումը մեկից ավելի վայրերում անօրինական է, ապա Caterpillar-ը հրաժարվում է նման անհամապատասխանության համար որևէ պատասխանատվությունից և կարող է դադարեցնել տվյալ մեքենայից տեղեկությունների հեռարձակումը:

Որոշակի երկրում Product Link համակարգի աշխատանքի վերաբերյալ հարցերի առկայության դեպքում դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին:

G0100 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

PL631 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող սարքավորումների նկատմամբ Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) RSS ստանդարտներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Եվրոպական Միության ծանուցումն օգտատերերին

PL631-ն կառուցված է այնպես, որ այն կարող է օգտագործվել Բելգիայում՝ չխախտելով ռադիոհաճախականությունների ընդգրկույթի օգտագործման նկատմամբ պահանջները:

PL641 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող սարքավորումների նկատմամբ Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) RSS ստանդարտներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Եվրոպական Միության ծանուցումն օգտատերերին

PL641-ն կառուցված է այնպես, որ այն կարող է օգտագործվել Բելգիայում՝ չխախտելով ռադիոհաճախականությունների ընդգրկույթի օգտագործման նկատմամբ պահանջները:

PL542 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել FCC-ի կանոնների մաս 22-ին և մաս 24-ին, ինչպես նաև B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող սարքավորումների նկատմամբ Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) RSS ստանդարտներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Եվրոպական Միության ծանուցումն օգտատերերին

PL542-ն կառուցված է այնպես, որ այն կարող է օգտագործվել Բելգիայում՝ չխախտելով ռադիոհաճախականությունների ընդգրկույթի օգտագործման նկատմամբ պահանջները:

Թաիլանդ

Այս հեռահաղորդակցման սարքավորումը համապատասխանում է NTC-ի տեխնիկական պահանջներին:

Նիգերիա

Այս հեռահաղորդակցման սարքավորման միակցումն ու օգտագործումը թույլատրված է Նիգերիայի հաղորդակցումների հանձնաժողովի կողմից:

PL240 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող սարքավորումների նկատմամբ Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) RSS ստանդարտներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Եվրոպական Միության ծանուցումն օգտատերերին

PL240-ն կառուցված է այնպես, որ այն կարող է օգտագործվել Բելգիայում՝ չխախտելով ռադիոհաճախականությունների ընդգրկույթի օգտագործման նկատմամբ պահանջները:

Վկայագիր Ինդոնեզիայի համար

49587/SDPPI/2017

3130

Վկայագիր Սինգապուրի համար

Համապատասխանում է IMDA-ի (Տեղեկատվական հաղորդակցության միջոցների զարգացման գերատեսչություն, Infocomm Media Development Authority) DB105771 չափորոշիչներին:

PL240 մոդելի վկայագրման նշագրումները

COUNTRIES	Labeling Requirements
AUSTRALIA	E401
COSTA RICA	FCC mark
JAPAN	R 003-160123 T D160071003
NEW ZEALAND	E401
NIGERIA	"Connection and use of this Communications equipment is permitted by the Nigerian Communications Commission"
QATAR	ictQATAR Type Approval reg. No: CRA/SA/2016/R-5433
THAILAND	"This telecommunication equipment conforms to NTC technical requirement"
UKRAINE	028
UNITED ARAB EMIRATES	TRA REGISTERED No: ER47254/16 DEALER No: DA0130583/14

Պատկեր 3 g06159202

PL241 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar-ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտատիրոջ՝ սարքն օգտագործելու իրավունքը:

Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) ծանուցումն օգտատերերին

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող սարքավորումների նկատմամբ Կանադայի Արդյունաբերության նախարարության (Industry Canada) RSS ստանդարտներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Եվրոպական Միության ծանուցումն օգտատերերին

PL241-ն կառուցված է այնպես, որ այն կարող է օգտագործվել Բելգիայում՝ չխախտելով ռադիոհաճախականությունների ընդգրկույթի օգտագործման նկատմամբ պահանջները:

PL141 մոդելի ռադիոհաղորդիչի վերաբերյալ ծանուցումներ

FCC-ի (Հեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ալեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

